## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1932 – Մայիս – Թիւ 5


էջ

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ Հ. Գ. — Քրիստոնէական ճար-
տարապետութիւն (պատմական հետազօ- . 193
տութիւններ) . . . . .
ԹՈՐԳՈՄԵԱՆ Տոքթ. Վ. — Հայ բժշկական . 210
արձանագրաբանութիւն . . .
Սրբազան տաղերգութիւն. — Տաղ Յարու- . 214
թեան . . . . . 215
Տաղ խաչի . . . . . 216
Տաղ Աստուածածնին . .
Տաղ Աստուածածնին (ի Գրիգորիսէ Աղ- . 216
թամարցւոյ) Հր. Փ. Հ. Ե. . .

**ԳՐԱԿԱՆ**

. 217
ՍՐԱՊԵԱՆ Ա. — Համերգ մեռելական . . 220
ՔԱՋԱՐԵՆՑ Հրաչ. — Մուրացիկները . 221
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. Վ. — Հայ բանաստեղծ 221
ՍՐԱՊԵԱՆ Ա. — Ս. Ղազար ( Հայոց կղզ-
ին) – Գերեզմաննոցն ի Ս. Ղազար – 222
Վանականներ – Իրիկունն ի Ս. Ղազար 222
Carducci ( Թրգ. Փ. Հ. Ե. ) — Ողջ լեր, . 224
Մարիամ . . . . .
ԹՈՄԱՃԵԱՆ Հ. Թ. (Թրգ.) (Յուշատետրի մը
էջերէն) Ռինալդի. — Կամք և գործ - . 224
Մանուկն ու կաւը . . . 225
ՕՐԲԵՐԵԱՆ Ռ. — Լորտ Պայրըն (ուսումն.) 225
ՏՈՊԱՃԵԱՆ Յ. — Փարիզեան պատկերներ . 231

**ԳՐԱԽՕՍԱԿԱՆ**

ՔԻՒՐՏԵԱՆ Յ. — Խաղբակեանք կամ Պռո-
շեանք Հայոց պատմութեան մէջ (Գարե- . 232
գին Արք. Յովսէփեան) . . .
ՓԷՉԻԿԵԱՆ Հ. Ե. — Գերեզմանատուն կա-
թոլիկէ Հայոց Կ. Պոլսոյ ( Հ. Յակոբ . 233
Ծ. Վ. Քոսեան) . . .

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ**

ԽՄԲ. — Պուլկարիոյ արքայազուններն և
Սաւոյիոյ Մարիա իշխանուհին ի Սուրբ . 237
Ղազար . . . . .
Մխիթար Աբբահօր յիշատակը՝ ի Սուրբ
Ղազար – Երուսաղէմի մէջ – ի Վենետիկ,
Մ. Ռ. Վարժարանի բարերարներուն և . 238
Ազգային նահատակներուն հետ . . 236
Հին ու նոր աւանդավէպ… (հայկական) . 240
Պր. Գ. Կիւլպէնկեան հրաժարած .


## SOMMAIRE

1932 – Mai – numéro 5


p.

**PHILOLOGIE**

*Nahabédian P. G.* — L'Architecture des églises (recherche historique) . 193
*Torkomian Doct. V.* — Epighraphe médicale arménienne . . 210
*Odes Sacrées* : A la Résurrection. – A la S.te Croix. – A la Mère de Dieu (d'auteurs inconnus). – Ode à la Mère de Dieu (de Krikoris Aghthamartzi) *publ. par P. E. P.* . . . . 214

**LITTERATURE**

*Srabian A.* — Symphonie funèbre. . 217
*Katcharentz H.* — Les mendiants . 220
*Horhannessian P. V.* — Le poète arménien. . . . . 221
*Srabian A.* — St. Lazare – Le cimetière à St. Lazare – Les Moines – La soirée. 222
*Carducci G.* — Ave Maria ! ( *Trad. par P. E. P.*) . . . 224
*Tomadjan P. T.* — (Quelques pages d'un cahier de notes). *Rinaldi.* — Volonté et action – L'enfant et l'argile 224 225
*Orperian R.* — Lord Byron (étude) . 225
*Dobadjian H.* — Tableaux parisiens . 231

**RECENSIONS**

*Kurdian H.* — Khaghbaghiank ou Brochiank dans l'histoire arménienne (par Mgr. Karékine Hovsépian) . . . 232
*Paitchikian P. Elie.* -- Cimetière des arméniens catholiques de Constantinople (par le R. P. J. Kossian) . . 233

**ECHOS d'ARMÉNIE**

*Réd.* — La visite des Souverains de la Bulgarie et de la Princesse Marie de Savoie à St. Lazare . . . 237
Commémoration de L'ABBÉ MÉKHITHAR, *à St. Lazare* : *à Jérusalem* : *à Venise* : commémoration des BIENFAITEURS du Collège et des MARTYRS arméniens (dans le Collège arm. Moorat-Raphaël) . . . 238
Une légende (arménienne) . . . 236
La démission de Mr. G. Gulbenkian . 240


**ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ**

Կը խնդրենք մեր այն բաժանորդներէն որ բարեհաճին
փութով կարգադրել իրենց հին ու նոր տարւոյ հաշիւները :

digitised by A.R.A.R.@




ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843-1932

ՄԱՅԻՍ

ԹԻՒ 5

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ՀԱՏ. Ղ. ՌՅՁԱ-ՌՅՁԲ


**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ Է

Հայկ. ճարտարապետութեան զարգացումը Արշակունեաց թագաւորութեան ժամանակ

( Շար. տես «Բազմավէպ» 1932, էջ 101 )

Ն. Հայը բնութեամբ նորաձեւութեան և զարգացումի սիրահար է, ուստի և նըմանելու յօժարափոյթ ։ Հայը՝ օտարատեաց չէ ի բնէ, այլ ընդհակառակն հիւրասէր, բարեսէր, ուստի ուր որ լաւ բան մը տեսնէ օրինակը կը վերցնէ, կը վերածէ և գործադրելու չի վարանիր. ձեւը ուրիշէն փոխ կ'առնէ, բայց կ'ուզէ որ կանթեղը իր ձեռքը բռնած ըլլայ. այս կերպ օգտագործութիւնը ոչ նուաստութիւն կը համարի և ոչ ի փնաս իր յատուկ ազգասիրութեան ։ Գիտուած է որ Հայը, միայնակ անհատ մը, ամէն բանէ աւելի գործնական կողմը կը մտածէ, քիչ մը իր բախտակից հրեայ ազգին պէս. այդ

արիւնը խառնուեցաւ այն ժամանակ երբ Տիգրան Բ. Մեծն հրէից հազարաւոր գերութիւնը բերաւ բնակեցուց Հայոց մեծ քաղաքներու մէջ ։ Անհատական Հայու արժէքը շատ մեծ գնահատուած է ամէն ժամանակ, ուստի առակ եղած է ըսել. Մէկ հայը հազար կ'արժէ. իսկ հազար հայը մէկ մը չ'արժեր. անոր համար որ իր յետին խելքը ի սկզբան չի գործածեր։ Արդարեւ անհատին անզուգական կարողութիւնները, ուրիշ ազգերէ աւելի փայլեր են Հայոց մէջ. մեր ամբողջ պատմութեան շէնքը իբրեւ սիւներու վրայ յեցած է սովորականէն բարձր անձնաւորութեանց վրայ, հոն չկայ ժողովրդական ակումբ